

Գրանցված է ԼՂՀ արդարադատության
նախարարությունում «1» դեկտեմբերի 2014թ.
Պետական գրանցման համար 2051496
ԼՂՀ արդարադատության նախարար

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» նոյեմբերի 2014թ.

N 17-Ն

ք. Ստեփանակերտ

**ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՐԿ
ՎՃԱՐՈՂԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎՆ ՈՒ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 10-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 9.6-րդ հոդվածի 1-ին մասը և «Իրավական ակտերի մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել հարկային մարմնին ներկայացվող դրոշմապիտակների
ձեռքբերման համար վճարված գումարը հարկային պարտավորությունների դիմաց
հաշվանցման և (կամ) հարկ վճարողին վերադարձման դիմումի ձևն ու լրացման կարգը՝
համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2013 թվականի դեկտեմբերի 3-ի «Դրոշմապիտակների ձեռքբերման համար վճարված գումարը հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման դիմումի ձևը սահմանելու մասին» N 10-Ն հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից, իսկ դրույթները կիրառվում են 2014 թվականի նոյեմբերի 15-ից:

Հ/Ծ 1-ԻՆ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Ա. ԲԱԼԱՅԱՆ

Հավելված
 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
 կառավարությանն առընթեր հարկային
 պետական ծառայության պետի
 «19» նոյեմբերի 2014թ.
 N 17-Ն հրամանի

Ձև

Դ Ի Մ ՈՒ Մ

**ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
 ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ
 ՀԱՇՎԱՆՑՄԱՆ (ԵՎ) ԿԱՄ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ**

1. Փաստաթղթի հերթական համարը	_____											
	(լրացվում է հարկային մարմնի կողմից)											
2. Հարկ վճարողի հաշվառման համարը												
3. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը												
4. Գտնվելու վայրը												
5. Հաշվառման վայրի հարկային մարմնի անվանումը												
6. Ստորև ներկայացված տեղեկությունների ժամանակահատվածը, որի համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված պարտադիր դրոշմավորման ենթակա որոշ ապրանքների համար նախկինում ձեռք բերված դրոշմապիտակների օգտագործման մասին հարկային մարմին ներկայացվել է հաշվետվություն												
սկիզբը				2	0	թ	ավարտը			2	0	թ
						[Ա]						
						քանակ (հատ)						
						[Բ]						
						գումար (դրամ)						
7. Ստացված դրոշմապիտակներ												
8. Արտահանված ապրանքների վրա դրոշմավորված դրոշմապիտակներ												
9. Վնասված դրոշմապիտակներ												
10. Պիտանելիության ժամկետում չիրացված, սահմանված կարգով դուրս գրված ապրանքների վրա փակցված դրոշմապիտակներ												
11. Չօգտագործված վերադարձված դրոշմապիտակներ												

	գումար (դրամ)
12. Դրոշմապիտակների ձեռքբերման համար վճարված	
13. Օգտագործված դրոշմապիտակների համար վճարված՝ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման ենթակա	
14. Խնդրում եմ դրոշմապիտակների ձեռքբերման համար վճարված գումարից հաշվանցել ստորև նշված հարկային պարտավորությունների դիմաց (ընդամենը)	
1)	
2)	
3)	
4)	
15. Խնդրում եմ, հիմք ընդունելով հարկային պարտավորությունների բացակայությունը, դրոշմապիտակների ձեռքբերման համար վճարված գումարից վերադարձնել	
16. Խնդրում եմ դրոշմապիտակների ձեռքբերման համար ավել վճարված գումարից հաշվանցել նոր ձեռք բերվող դրոշմապիտակների համար վճարման ենթակա գումարի դիմաց	

Հարկ վճարողի/ղեկավարի _____

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

« ___ » _____ 20 թ

ԿԱՐԳ

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ (ԵՎ) ԿԱՄ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԼՐԱՑՄԱՆ

1. Դիմումը ներկայացնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների արտադրողները (այսուհետ՝ արտադրողները):

2. Միևնույն ժամանակաշրջանի համար երկու և ավելի անգամ դիմում ներկայացնելու դեպքում նախորդները համարվում են ճշգրտված: Դիմումում ներառված տեղեկությունների ճշգրտում չի կարող կատարվել, եթե դրանք վերաբերվում են հարկային մարմնի կողմից ստուգված կամ ստուգվող ժամանակաշրջանին:

3. Դիմումում գումարները լրացվում են Հայաստանի Հանրապետության դրամներով:

4. Դիմումը լրացվում է հետևյալ կերպ՝

1) 1-ին տողը լրացվում է հարկային մարմնի կողմից,

2) 2-րդ տողում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),

3) 3-րդ տողում լրացվում է իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը,

4) 4-րդ տողում լրացվում է իրավաբանական անձի գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը,

5) 5-րդ տողում լրացվում է հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային մարմնի անվանումը,

6) 6-րդ տողում լրացվում է այն ժամանակահատվածի սկիզբը (ամսաթիվը, ամիսը, տարեթիվը) և ավարտը (ամսաթիվը, ամիսը, տարեթիվը), որի համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված պարտադիր դրոշմավորման ենթակա որոշ ապրանքների համար նախկինում ձեռք բերված դրոշմապիտակների օգտագործման մասին հարկային մարմին ներկայացվել է հաշվետվություն: Հաշվետվությունների ճշգրտման դեպքում ներկայացվող

հաշվետվության ժամանակահատվածի սկիզբը և ավարտը պետք է համապատասխանի ճշգրտվող ժամանակաշրջանի համար նախկինում ներկայացված համապատասխան տվյալներին: Ժամանակահատվածի սկիզբը նշվում է նախորդ ներկայացված դիմումում նշված ժամանակահատվածի ավարտում նշված օրվան հաջորդող օրը,

7) 7-րդ տողի «Ա» սյունակում լրացվում է ստացված դրոշմապիտակների քանակը, «Բ» սյունակում՝ ստացված դրոշմապիտակների համար վճարված գումարը,

8) 8-րդ տողի «Ա» սյունակում լրացվում է արտահանված ապրանքների վրա դրոշմավորված դրոշմապիտակների քանակը, «Բ» սյունակում՝ դրանց համար վճարված գումարը,

9) 9-րդ տողի «Ա» սյունակում լրացվում է վնասված դրոշմապիտակների քանակը, «Բ» սյունակում՝ վնասված դրոշմապիտակների համար վճարված գումարը,

10) 10-րդ տողի «Ա» սյունակում լրացվում է պիտանելիության ժամկետում չիրացված, սահմանված կարգով դուրս գրված ապրանքների վրա փակցված դրոշմապիտակների քանակը, «Բ» սյունակում՝ դրանց համար վճարված գումարը,

11) 11-րդ տողի «Ա» սյունակում լրացվում է չօգտագործված վերադարձված դրոշմապիտակների քանակը, «Բ» սյունակում՝ դրանց համար վճարված գումարը,

12) 12-րդ տողում լրացվում է դրոշմապիտակների ձեռքբերման համար վճարված գումարը,

13) 13-րդ տողում լրացվում է օգտագործված դրոշմապիտակների համար վճարված՝ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման ենթակա գումարը,

14) 14-րդ տողում լրացվում է դրոշմապիտակների ձեռքբերման համար վճարված գումարից այն ընդամենը գումարը, որը հարկ վճարողը ցանկանում է հաշվանցել ստորև նշված հարկային պարտավորությունների դիմաց: Հաջորդական տողերի առաջին սյունակներում լրացվում են հարկային պարտավորությունների անվանումները, որոնց հաշվին հարկ վճարողը դիմում է հաշվանցում կատարելու նպատակով, իսկ երկրորդ սյունակներում՝ համապատասխան գումարները,

15) 15-րդ տողում լրացվում է վերադարձի ենթակա գումարը՝ այն դեպքում, եթե հարկ վճարողի մոտ բացակայում են հարկային պարտավորությունները, և վերջինս ցանկանում է, որ վճարած գումարից նշված չափի գումար վերադարձվի,

16) 16-րդ տողում լրացվում է հաշվանցման ենթակա գումարը, որը հարկ վճարողը ցանկանում է իր վճարած գումարից հաշվանցվի նոր ձեռք բերվող դրոշմապիտակների համար վճարման ենթակա գումարի դիմաց:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

Մ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ